ՓԱՅԼԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ

# ՆՈՐ ՏԱՐԻՆ

Նո՞ր է տարին
Տարիներից հետո անքիվ...
Ազնիվ մարդկանց մեծ սրտի մեջ
Հույսի, հույզի
Բյուր կրակներ են բռնկվում,
Ու փերթ առ փերթ
Գորշ երկնքից թափվող ձյունն այս
Իջնում խաղաղ հոգիներին
Որպես երազ վառ գալիքի,
Որպես կյանքի խոր ներշնչում:

Նո՞ր է տարին...
Ջերմ ըղձերի տենդն էլ է նոր,
Որ ակ ունեն բոլոր մարդու սրտերի մեջ.
Ծոցվորում են
Ազնիվ մարդկանց լայն սրտերում
Վառ տենչերի առագաստներն սպիտակ.
Վերանում են նպատակներ,
Որ ցնծություն կբերեն յոկ
Ու կծնեն ծով բարիքներ...

Նո՞ր է տարին...
Ու կբացվի դուռը ոսկյա
Անուրջների:
Հորիզոնը կլայնանա,
Նոր պատկերներ կուրվագծվեն
Ստեղծագործ մարդկանց առաջ...

Կանցնի հինը ու կբաղվեն
Ժամանակի սառույցի տակ
Ամեն չարիք ու տրամություն.
Լոկ կմնան լավն ու բարին...:

Նո՞ր է տարին...
Եվ հոգեցունց թովչանք ունի
Նոր երգերի շեշտը հզոր:
Անծայրածի՞ր աշխարհով մեկ,
Խաղաղության պայքարը սուրբ
Ծավալվում է ալի՞ք-ալի՞ք,
Դառնում անպարտ մի միջնաբերդ.
Ուր պիտ' վառվեն բյուրեղացած
Երազների հազար ջահեր
Ու վիշտն իսպառ գերեզմանվի...

Նո՞ր է տարին...
Նորոգվում է ամեն մի մարդ
Հոգով, սրտով:
Ի՞նչ վառ հույսեր են ծնվում արդ
Ու երազներ հյուսվում քել-քել.
Ի՞նչ եռանդ ու ավյուն է հորդ
Վազում ամեն երակի մեջ.
Չէ՞ որ արդեն այս նոր տարին
Ավետիսն է խաղաղության
Ու մահերգը պատերազմի...: